**«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍՏՈՒԳԱՉԱՓՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1**

ք. Երևան «   »   20 թ.

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը**, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից, և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ա.Ռսյանյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է՝ **ստուգաչափման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահման¬ված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5694840 (հինգ միլիոն վեց հարյուր իննսունչորս հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:
Ընդ որում վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:
5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:
5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը

հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտա¬վորու¬թյունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատա¬րելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ**

**Հասցե` ք. Երևան, 0025, Կորյունի 2**

**Բանկ` <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ**

**Հ/Հ 11500166513800**

**ՀՎՀՀ 01503448**

**Ռեկտոր` Ա. Ա. Մուրադյան**

________________________________

(ստորագրությունը)

Կ.Տ.

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2007720078

2025-10-28 13:41:41 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ**

**ք.Երևան, Կոմիտաս 49/4**

**հ/հ 1150012490810100**

**«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կինյան մ/ճ**

**ՀՎՀՀ 00219641**

**Տնօրենի պաշտոնակատար` Ա.Ոսկանյան**

--------------------------------------------

(ստորագրություն)

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

3201660256

2025-10-24 11:16:58 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Հավելված N 1*
*«          »               20  թ. կնքված*
*N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1  ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | Միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 71351460 | Ջերմաչափ-խոնավաչափի՝ ստուգաչափում | հատ | 10200 | 938400 | 92 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 938400 |
| 2 | 71351460 | Կշեռքի՝ ստուգաչափում (տիրույթը 60 կգ-ից ավել) | հատ | 9600 | 163200 | 17 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 163200 |
| 3 | 71351460 | Կշեռք էլեկտրոնայինի՝ ստուգաչափում (տիրույթը 150-1500 կգ) | հատ | 18000 | 144000 | 8 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատո | 144000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ւի կողմից նշված հասցեով: | |
| 4 | 71351460 | Կշեռք էլեկտրոնայինի՝ ստուգաչափում (տիրույթը 60-150 կգ) | հատ | 12000 | 24000 | 2 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 24000 |
| 5 | 71351460 | Կշեռք լաբորատորի՝ ստուգաչափում (էլեկտրոնային) | հատ | 12000 | 36000 | 3 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 36000 |
| 6 | 71351460 | Կշեռք տեխնիկականի՝ ստուգաչափում | հատ | 3600 | 3600 | 1 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 3600 |
| 7 | 71351460 | Կշեռք մանկականի՝ ստուգաչափում (տիրույթը մինչև 60 կգ) | հատ | 4800 | 163200 | 34 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 163200 |
| 8 | 71351460 | Տոնոմետրի՝ ստուգաչափում | հատ | 1200 | 115200 | 96 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 115200 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | 71351460 | Գլյուկոմետրի (շաքարաչափ)՝ ստուգաչափում | հատ | 9000 | 324000 | 36 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 324000 |
| 10 | 71351460 | Բազմաֆունկցիոնալ մոնիտորի (կարդիոմոնիտոր)՝ ստուգաչափում | հատ | 9600 | 998400 | 104 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 998400 |
| 11 | 71351460 | Ջերմակարգավորիչի՝ ստուգաչափում | հատ | 3600 | 151200 | 42 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 151200 |
| 12 | 71351460 | Պուլսօքսիմետրի՝ ստուգաչափում | հատ | 4800 | 384000 | 80 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 384000 |
| 13 | 71351460 | Էլեկտրակարդիոգրաֆի՝ ստուգաչափում | հատ | 10800 | 194400 | 18 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 194400 |
| 14 | 71351460 | Կարդիոմոնիտոր (հոլտեր մոնիտորինգ սարք)՝ ստուգաչափում | հատ | 18000 | 108000 | 6 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատո | 108000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ւի կողմից նշված հասցեով: | |
| 15 | 71351460 | Համակարգչային սպիրոգրաֆի՝ ստուգաչափում | հատ | 15600 | 46800 | 3 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 46800 |
| 16 | 71351460 | Մանոմետրի՝ ստուգաչափում | հատ | 1200 | 36000 | 30 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 36000 |
| 17 | 71351460 | Էլեկտրոմիոգրաֆի՝ ստուգաչափում | հատ | 14400 | 14400 | 1 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 14400 |
| 18 | 71351460 | Կոագուլոմետրի՝ ստուգաչափում | հատ | 18000 | 54000 | 3 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 54000 |
| 19 | 71351460 | Աուդիոմետրի՝ ստուգաչափում | հատ | 7200 | 7200 | 1 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 7200 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | 71351460 | Բժշկական ինֆրակարմիր ջերմաչափի՝ ստուգաչափում | հատ | 4200 | 109200 | 26 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 109200 |
| 21 | 71351460 | Ջերմաչափի 0.2-0.1°Cբաժանքով դրական տիրույթով (Բժշկական էլեկտրոնային ջերմաչափ)՝ ստուգաչափում | հատ | 6000 | 654000 | 109 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 654000 |
| 22 | 71351460 | Ջերմաչափի՝ ստուգաչափում | հատ | 3600 | 226800 | 63 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 226800 |
| 23 | 71351460 | Էլեկտրաէնցեֆալոգրաֆի՝ ստուգաչափում | հատ | 14400 | 14400 | 1 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 14400 |
| 24 | 71351460 | Անալիզատորի՝ ստուգաչափում | հատ | 18000 | 522000 | 29 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 522000 |
| 25 | 71351460 | Ուրինոմետրի՝ ստուգաչափում | հատ | 9000 | 18000 | 2 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատո | 18000 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | ւի կողմից նշված հասցեով: | |
| 26 | 71351460 | Կաթոցիկի՝ ստուգաչափում | հատ | 5640 | 118440 | 21 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 118440 |
| 27 | 71351460 | Ցենտրիֆուգաի՝ ստուգաչափում | հատ | 18000 | 108000 | 6 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 108000 |
| 28 | 71351460 | Ջերմակարգավորիչ թերմոստատի՝ ստուգաչափում | հատ | 3600 | 14400 | 4 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 14400 |
| 29 | 71351460 | Ջերմակարգավորիչ ջրային բաղնիքի՝ ստուգաչափում | հատ | 3600 | 3600 | 1 | *Ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից նշված հասցեով: | 3600 |

***Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքելու օրվանից սկսած մինչև 2025թ.վերջ***

***Ծառայությունը մատուցելու արդյունքում՝ կիրառվում է չափման սարքի դրոշմ և / կամ ստուգաչափման վկայական մեկ տարի ժամկետով:***

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ

Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2

Բանկ՝ <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ

Հ/Հ 11500166513800

ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

______________________________

(ստորագրությունը)

Կ.Տ.

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2007720078

2025-10-28 13:42:14 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ

ք.Երևան, Կոմիտաս 49/4

հ/հ 1150012490810100

«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կինյան մ/ճ

ՀՎՀՀ 00219641

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Ոսկանյան

-------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

Ստորագրող

ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ

3201660256

2025-10-24 14:09:26 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Հավելված N 2*
*«        »              20  թ. կնքված*
*N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351460 | Ջերմաչափ-խոնավաչափի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 938400 | 938400 | 938400 |
| 2 | 71351460 | Կշեռքի՝ ստուգաչափում (տիրույթը 60 կգ-ից ավել) | - | - | - | - | - | - | - | - | - | - | 163200 | 163200 | 163200 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | 71351460 | Կշեռք էլեկտրոնային՝ ստուգաչափում (տիրույթը 150-1500 կգ) | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 144000 | 144000 | 144000 |
| 4 | 71351460 | Կշեռք էլեկտրոնային՝ ստուգաչափում (տիրույթը 60-150 կգ) | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 24000 | 24000 | 24000 |
| 5 | 71351460 | Կշեռք լաբորատորի՝ ստուգաչափում (էլեկտրոնային) | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 36000 | 36000 | 36000 |
| 6 | 71351460 | Կշեռք տեխնիկականի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 3600 | 3600 | 3600 |
| 7 | 71351460 | Կշեռք մանկականի՝ ստուգաչափում (տիրույթը մինչև 60 կգ) | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 163200 | 163200 | 163200 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 71351460 | Տոնոմետրի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 115200 | 115200 | 115200 |
| 9 | 71351460 | Գլյուկոմետրի (շաքարաչափ)՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 324000 | 324000 | 324000 |
| 10 | 71351460 | Բազմաֆունկցիոնալ մոնիտորի (կարդիոմոնիտոր)՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 998400 | 998400 | 998400 |
| 11 | 71351460 | Ջերմակարգավորիչի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 151200 | 151200 | 151200 |
| 12 | 71351460 | Պուլսօքսիմետրի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 384000 | 384000 | 384000 |
| 13 | 71351460 | Էլեկտրակարդիոգրաֆի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 194400 | 194400 | 194400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14 | 71351460 | Կարդիոմոնիտոր (հոլտեր մոնիտորինգ սարք)՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 108000 | 108000 | 108000 |
| 15 | 71351460 | Համակարգչային սպիրոգրաֆի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 46800 | 46800 | 46800 |
| 16 | 71351460 | Մանոմետրի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 36000 | 36000 | 36000 |
| 17 | 71351460 | Էլեկտրոմիոգրաֆի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 14400 | 14400 | 14400 |
| 18 | 71351460 | Կոագուլոմետրի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 54000 | 54000 | 54000 |
| 19 | 71351460 | Աուդիոմետրի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 7200 | 7200 | 7200 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | 71351460 | Բժշկական ինֆրակարմիր ջերմաչափի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 109200 | 109200 | 109200 |
| 21 | 71351460 | Ջերմաչափի 0.2-0.1°Cբաժանքով դրական տիրույթով (Բժշկական էլեկտրոնային ջերմաչափ)՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 654000 | 654000 | 654000 |
| 22 | 71351460 | Ջերմաչափի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 226800 | 226800 | 226800 |
| 23 | 71351460 | Էլեկտրաէնցեֆալոգրաֆի՝ ստուգաչափում | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | ' | 14400 | 14400 | 14400 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 24 | 71351460 | Անալիզատորի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 522000 | 522000 | 522000 |
| 25 | 71351460 | Ուրինոմետրի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 18000 | 18000 | 18000 |
| 26 | 71351460 | Կաթոցիկի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 118440 | 118440 | 118440 |
| 27 | 71351460 | Ցենտրիֆուգաի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 108000 | 108000 | 108000 |
| 28 | 71351460 | Ջերմակարգավորիչ թերմոստատի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 14400 | 14400 | 14400 |
| 29 | 71351460 | Ջերմակարգավորիչ ջրային բաղնիքի՝ ստուգաչափում | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3600 | 3600 | 3600 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

______________________________
(ստորագրությունը)
Կ.Տ.

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ
2007720078

2025-10-28 13:43:13 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ
ք.Երևան, Կոմիտաս 49/4
հ/հ 1150012490810100
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Կիևյան մ/ճ
ՀՎՀՀ 00219641
Տնօրենի պաշտոնակատար՝ Ա.Ոսկանյան

-------------------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Ստորագրող
ԱՐՄԵՆ ՈՍԿԱՆՅԱՆ
3201660256

2025-10-24 14:11:27 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Հավելված 3*
*«         »              20  թ. կնքված*
**N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1***ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը _______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
________________________________
________________________________
գտնվելու վայրը __________________
հհ______________________________
հվհհ____________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«      » «              » 20     թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «      »   «              » 20     թ. դուրս գրված N ___  հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
________________________________
ստորագրություն
________________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »       20  թ. կնքված*
**N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1** *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _________________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20      թ. ________________________ -ին կնքված N _______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20  թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________________________ ________________________________
ազգանուն, անուն ազգանուն, անուն

________________________________ ________________________________
ստորագրություն ստորագրություն

*Հավելված N 4*
*«          »               20  թ. կնքված*
**N ԳՀԾՁԲ-2025/16-ԵՊԲՀ-1** *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

______________________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

____________________________-ի և _______________________-ի միջև «--»         20  թ. կնքված
պատվիրատուի անվանումը                                   կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի     միջև  «--»   20  թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

___________________________________________________          ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)          ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»          20  թ.